

ԱՆԱՅԵԼ  
ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԽԱՂԱՔԱԿԱՐ  
ՔԱՂԱՔՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀԱՅՈՎԱՐԴԱՆ

891.995  
7-28

891.995

Դ-28

ԱՆՁԱՑԵԼ ՊԱՏԿԱՆԱՅԱՆ

2011-07-06 ՀԱՐՄԱՆ

ՄԱԿԱԿԱՆ  
ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՎԻՊԱՆԻ ՌԵՎԱՐԱՆ  
ՎԵՐԿՐԱ ԾԽՈՅՏՈՔԾԻՆԻ  
(Հայոց կոնսուլատ Փ. Վ.)


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱՐԵՎԱՐ



18 JUL 2013

12070



ԽՈՇԿԱՆ ԵՐ

(Ժողովրդական)

Կըսան-կըսան-կըսան,  
Կըսունկները հա թըսան,  
Կըսունկների թևի տակ  
Եկավ ամառն մեր դըսան:

3673-82

РАФАЭЛ ПАТКАНЯН  
ДЕТСКИЕ СТИХОТВОРЕНИЯ

(На армянском языке)

Армгиз, 1941, Ереван

## ԱՍ. ԳԻՒ

Բաղիկ-բաղիկ,  
Կարմիր թաթիկ.

Ուր ես գընում կամաց-կամաց,  
Զագուկներիդ չորս կողմը առած:  
— Ես գնում եմ ջուր գտնելու,  
Զագուկներիս լրվանալու,  
Զագուկներըս մաքուր-մաքուր  
Տղոց երեսն ազտ է ու մուր:

## Ա. Ա. Ց Ո Ւ

Կամոհն ուկավափիսիկ-փիսիկ,  
Հազար նազով ինչպես հարսիկ,  
Դունչը սրբեց թաթիկներով,  
Մազը սմնդրեց շանցիկներով,  
Կատնեց կատնեց հեր հետ տրեռում,  
Թթ մկներն են այս օր դարթուն:

ՆԻԽԵՇԽԱԿ

Գ. Ա. Ռ Ե Ռ Ի Կ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,  
Բուրդըդ սպիտակ ու փափուկ,  
Դաշտ վազելով ու արսու,  
Մորըդ քաշում ես կարսու,  
Մի լալ, գառնուկ սիրական,  
Փոքրիկ տըղի դու նըման,  
Կուգա մայրըդ. հետը շատ  
Կըբերե քեզ անուշ կաթ,

Մարտն անցավ, հասավ ապրիլ գեղեցիկ  
Հեռու աշխարքե եկավ ծիծեռնիկ,  
Բարով դուն եկար, գարնան կարապետ,  
Բուն շինողներից ամենից վարպետ:

Կըռունկը թըռավ, զընաց վերերեն,  
Սոխակն էլ փախավ մեր պարտեզներեն,  
Մեկ դու մընացիր ճընճղուկների հետ,  
Միրուն ծիծեռնիկ, գարնան կարապետ:

Պատուհանիս մոտ շինե քու բունը,  
Անուշ ճըռվողով երգե գարունը,  
Ածա ձու, հանե գեղեցիկ ձագեր,  
Մընա մեր մոտը մինչի սեպտեմբեր:

## Մ Ե Ղ Ա Խ

Հա, ծագեցավ արեգակը,  
Հա, ծաղկեցավ մանիշակը,  
Մեղուն թողուց իր փեթակը  
Տըզտըզալով-տըզտըզալով:

Մեղուն թըռավ ծաղկե ծաղիկ,  
Մեղը առավ քաղցր-անուշիկ  
Մոմը տարավ հոտոտ լուսիկ  
Պըզպըզալով-պըզպըզալով:

Անուշ մեղը՝ մանը տըղոց,  
Դեղին մոմը՝ ամեն սըրբոց,  
Իսկ չարերին՝ կըճ ու խայթոց.  
Կըսկըծալով-կըսկըծալով:

## ԳԱՐՈՒՆ

Արի, գարուն,  
Արի, սիրուն,  
Բեր պարզ արև,  
Առատ անձրեւ  
Խնդրե՞ տերեն  
Հաճար, ցորեն,  
Զըմեռն էր մեծ  
Ողջ ըսպառեց,  
Ամբար, մառան  
Դադարկ դառան:

## Գ. Ա. Ր Ո Ւ Ն

Կարուտ ենք տեսքիդ, աննըման գարուն,  
Շնւտ արի մեղի, բեր ծաղիկ սիրուն,  
Բեր պայծառ արև, բեր մեղ տաք օրեր,  
Ճըսվըսող թըսչուն, բեր կանանչ դաշտեր:

Բաց մեր դըսները, բաց մեր պատուհան,  
Թող բացվին ծաղկին, վարդ, մեխակ, շուշան.  
Փակված սենյակեն ելնինք, ազատվինք,  
Կանանչ դաշտ երթանք, խաղանք գըլորվինք:

## Ա. Ր Ե Վ

Արև, արև, արի գուս,  
Քեզ բերել ենք աչքի-լուս,-  
Քու քուրիկը լուսինկան  
Բերեց չամիչ մեկ աման,  
Ամպը եկավ, մութ արավ,  
Չամիչն աչքերես կորավ+  
Բաց երեսըդ, արեգակ,  
Մեկ բուռ չամիչ քեզ կտանք...  
Օ՛խ, արեին խափեցինք,  
Ամպի տակեն հանեցինք:

### ՄԱՆԻՇԱԿ

#### ԱՆՁԲԱ

Անձրև, անձրև՝ ցած արի,  
Բըսցիւը ցորեն հւ գարի;  
Բըսցիւը ծնդիկ, կանանչ բնտ,  
Ավլե փռշի, մաքրե օդէ

Անձրև, անձրև՝ ցած արի,  
Գալլու ամենուս բարի:

Դեռ մւր է ծիծեռ, դեռ մւր է առիակ,  
Գարնան կարաւակետ եկավ մանիշակ.  
Երկնային խունկը չորս կողմը բուրեց,  
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց:

Երկինքն է անամազ, շողջաղաւն արև,  
Տանք մանիշակին, երեխեք, բարի,  
Որ մեր դաշտերին բերեց նոր գպրուն,  
Նախշուն հավերով, ծաղկով զարդարուն:

## ԱՇՈՒՆ

Աշունը եկավ, թափեցավ սաղարթ,  
Ել մի փընտրիլ դու մանուշակ ու վարդ,  
Բնությունը տըխուր, պարտեզը տըրտում,  
Զըմեռվա հոգսն է մարդոցը սրտում:

Երեխան փակված մենակ սենյակում,  
Պատուհանիցը պարտեզ է նայում,  
Միտքը բերում է գարնան օրերը,  
Մարդերի վըրա զըվարթ խաղերը...

Մի տրտմիլ, տրդա, թող անցնի մարտը,  
Նորից կը բացվին նարգիզն ու վարդը,  
Նորից սոխակը պիտի գա հանդես.  
Նորից խաղալու դու կերթաս պարտեզ:

## ԶՅՈՒՆ

«Ախ, ի՞նչու-ի՞նչու կուգա պաղ ձյունը  
Նորից ամիսներ պիտ մընամ տունը,  
Տեսնելու չեմ ես. կանանչ ծառ, արոտ,  
Հոտոտ ծաղիկեն պիտ մընամ կարոտ»:  
—Զյունը որ կուգա երկնքեն ի վար,  
Իմացիր, մեծ բաղդ է մարդուս համար,  
Վերմակի պես տաք կը ծածկե գետին,  
Որ բույսի արմատն ոկմանա ցրտին.  
Նա հողին կուտա հյութ, պարարտություն,  
Դաշտին ու արտին մեծ առատություն:  
Մի տրտնջալ, մարդ, դու բընութենեն,  
Թե տաք և թե ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են



## ՀՈՐԾ ԵՎԱՄՔ

Չորս եղբարք են. ամեն տարի  
Երկրիս վըրան ման են գալի.  
Չորսն էլ ջոկ-ջոկ ունին հասակ.  
Պարզմներն են հազար տեսակ:


Առաջինն է պատանի,  
Բողբոջ տերե, սաղարթ ունի,  
Պայծառ տերե, կանանչ արոտ.  
Որոնց տըղաք են միշտ կարոտ:

Երկրորդ եղբալըն երիտասարդ  
Տալիս է մեզ անձրե առատ,  
Մաղկունք ցանում է ամեն դի,  
Հույս է տալիս առատ հընձի:

Երրորդ եղբալըն այր չափահամ,  
Մրգերով լի ունի մի թաս,  
Բաժանում է տըղոց լուր գանձ—  
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ:

Չորրորդ եղբալըն է ծերունի,  
Ցուրտ ու խսովար ջալկած ունի,  
Այգի անտառ ամայացուց,  
Դաշտ և արոտ ձլունով լըցուց:

Գիտեն արդիք հայ տղերքը  
Որոնք են այս չորս եղբարքը,  
Եղանակներն են սոքա մեր  
Գարուն, անառ, աշուն, ձմեռ:



Զ Մ Ե Ա

Զըգիտեմ՝ ինչու ձըմեռվա օրը  
Հիշում եմ ես միշտ իմ հալեղբորը,—  
Ասում եմ՝ արդիսք չունի՞ նա կարիք,  
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք,  
Ունի՞ տաք հալավ, ունի՞ նա մուշտակ,  
Ամսուր է տունը, կըտուրը չէ՞ ծակ...  
Ու արակես ես միշտ ձըմեռվա օրը  
Միտըս բերում եմ իմ հալեղբորը:

Զ Յ Ո Ւ Ն

Երբ որ ձյուն կուգա՝ ես կուրախանամ,  
Որ գուլս պիտ ելնեմ, դահուկ պիտ խաղամ...  
Բայց տեղս որքան աղքատ տըղայք կան,  
Որ տաք հալավե կարոտ կը մընան:

Ն Ո Ր Տ Ա Ր Ե

Ահա հասավ նոր տարի,  
Հետը բերեց նոր բարի—  
Մանըր արդոց՝ ուրախ օր,  
Բարի գալակ՝ հորն ու մոր:

Մանըր արդայք են ուրախ,  
Ունին կաղին, կողինախ,  
Մալորի չոր, չամիչ, թուզ,  
Փրշատ, ունաբ ու ընկուզ:

Մանըր արդալք՝ չի մոռնաք,  
Աշխարքումը չեք մենակ,  
Ուրիշ շատ խեղճ տրդայք կան  
Աղքատ և անօդնական:

Մի օր փոքրիկ արդան ասաց.  
— Ինչպես կուզեմ ես, մայրիկ,  
Մըաքիս մէջը կարծածիս պես  
Լինել արդա երջանիկ:—

Ծիծաղելով ասաց մալըլ.  
Ո՞րդյակ՝ ի՞նչ է քեզ պակաս,  
Աշխարքումը կա այնպես բան,  
Որն որ գու չունենաս:

Հալը ու մայրը գլխուդ վրան,  
Հալավը տաք ու մաքուը,  
Փափուկ կողինք, մեծ բնակարան,  
Առատ, անուշ կերակուը:

Նայե՛ շուրջը, միրուն որդի,  
Շամա մարդ ունի քեզ չափ բան,  
Դու չը գիտեմ, որքան աղքատ  
Տկլոր, քաղցած որբեր կան:

— Հենց ալդ է որ, քնքուիշ մալըլիկ,  
Ինձ չէ՛ տալիս ուրախ օր,  
Որ իմ շուրջը ամեն տըդա  
Ինձ նըման չէ բախտավոր:

ՎԱՐԺԱՑՈՒՆ

— Մալրիկ՝ ինչու այս խեղճը  
Ման է գալիս գըջըլտած,  
Ոտքը բոբիկ, գըլխաբաց,  
Ինքն էլ գրեթե միշտ հարբած:

— Որդիակ, դա էլ քեզ նըման  
Մի օր տըղա էր փոքրիկ.  
Բայց թողուցին անխընամ  
Նորան մոտի վատ մարդիկ:

Չուղարկեցին վարժատուն,  
Բարի խըրատ չի տըվին,  
Մընաց խեղճը անուառում,  
Ծուլլ ու անգործ բընավին...

Ինքըդ դատե՛, բըրետե՛ն  
Օգուտ ունի մեղվանոց.  
Նուլնպես գիտցիր, տըգետե՞ն  
Երբեք չիկա շահ մարդոց:

Այն ժամանակ մեզ կուտա՞ն  
Մարդիկ հալավ, տուն ու հաց,  
Երբ որ նոքա կըստանան  
Մեղանից շահ՝ փոխադարձ....

Այս պատճառով՝ ալդ մարդը  
Ման է գալիս գըջըլտած,  
Ոտքը բոբիկ, գըլխաբաց,  
Ինքն էլ գրեթե միշտ հարբած: —

— Մալրիկ՝ չուզեմ ես նըման  
Լինել թշվառ ալդ մարդուն.  
Այսուհետև պիտ երթամ  
Ամենայն օր վարժատուն:

## ԳԻՑՈՒԹՅՈՒՆ

Ես մի բան գիտեմ շատ խելոք է նա;  
Գիտե կրոն ավել քան ըզքահանա.  
Գիտե նա երկինք, երկիր, ծով անհուն  
Ավել քան տասըն մարդիկ ինաստուն:

Աշխարքիս մեջի կենդանյաց անվանք՝  
Տունկի, սողունքի—գիտե նա բերանք,  
Ջրերու կաթիլ ու ավազ ծովուն  
Կրհամրե նա քեզ ճիշտ մի րոպեռմ...  
Խելքդ շատ մի մաշիլ — այս բանի անունն  
Ասում են մարդիկ ուսում-գիտություն:

## ԱՄԵՆԱՄԵՆ ԱՆՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Երբ հողագործը չունի եզ, արոր,  
Երբեք չեմ ասիլ նորան բաղդավոր.

Երբ ապրանք ու փող չունի խանութպան,  
Նա էլ է անբաղդ, թըշկառ բավական.

Բայց երբ չերթա հալ տըղան վարժատուն; —  
Այս է ամենից մեծ անբաղդություն:



### ԽԵԼՈՒԹ ԵՐԵԽԱ.

Խելութ երեխան այսպես պիտ լինի—  
Կանուխ պիտ զարթե, շուտ քուն պիտ մտնի.  
Պիտի չի մաշե սիրտը հորն ու մոր,  
Դըպրոց պիտ երթա, կարդա ամեն օր:

### Ա. Բ Լ Ա Ր

Ինչու աքլարը կանգնած է բակում,  
Պինդ պինդ կանչում է իր կուկուրիկուն:

Էնդուր որ՝ վաղուց արևն է ծագել  
Բալց ծույլ երեխան քընից չէ՝ զարթել,  
Դեռ չէ՝ վերկացել, աղոթքը արել  
Դըպրոցի դասը դեռ չէ սովորել:

Կանչում է աքլարն իր կուկուրիկուն,  
Տըղալոց պարտքը միտերն է ձզում:

## ԺՐԱԶԱՆ ՑՂԱ

ՑԽՈՒՐ. ԵՐԵՒԱՆ

Երբ որ ծագեցավ պայծառ արեգակ,  
Աքլար, աղաֆին, հավ ու ծիծեռնակ,  
Չի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով  
Գնացին իրանց գործին ըշտապով:

Միայն ծույլ տըղան չի պսաց դըպըսց,  
Գիրքը շպըրտեց ու փախավ փողոց.  
Իրիկուն ամենքն հետ դարձան ուրախ,  
Միայն տըղան էր տրտում, գլխակախ:

Տըղան սիրում է ձեզ շատ, արեգակ,  
Դաշտ ու պարտեղում ճըռվըռող թոշնակ,  
Ճյուղերից կախ-կախ պտուղներ հասուն,  
Բայց ձեզնից ավել պիտ սիրե ուսում:

Ուրեմն թողեք, նախ դպրեց երթա,  
Ընկերների հետ դասերը նա տա,  
Եվ երբոր յուր սուրբ պարտքը կատարե,  
Որքան որ ուզե՞ թող նա ձեզ սիրե:

Այնուհետև ցոլմ, պայծառ արեգակ,  
Այնուհետև երգե՞... դու նախշուն թոշնակ,  
Ու անուշ համը համուն պըտուղին  
Թող լինի վարձը, ժըրաչան տըղին:

## ԵՐԵՎԱՆԻ ՈՒ ՄԻ

Ականջդ երկու, ունիս մի բերան,  
Հասկացիը, դու լավ,  
Աշխարքիս վըրա կը լրսես շատ բան,  
Ու խոսե սակավ:

Աչքերդ երկու, ունիս մի բերան,  
Հասկացիը դու լավ,  
Աշխարհիս վըրա կը տեսնես շատ բան,  
Ու պատմե սակավ:

Երկու ձեռք ու մի բերան դու ունիս,  
Հասկացիը ինձ լավ,  
Օրնիբուն ու շատ պիտի աշխատիս,  
Եվ ուտես սակավ:

## Թ-ՌԶՈՒՆԻ ԶԱԳ

Անկողնիկի մեջ անմեղ երեխան  
Նիրհում է խաղաղ հրեշտակի նըման,  
Իսկ նորա մայրը մոտի սենյակում  
Երեխի համար խավիծ էր եփում:  
Երդիկեն հանկարծ գալլը ներս թրոավ,  
Տըզի անկողնին կատղած մոտեցավ.  
Երեխեք՝ ինչու այդպես սարսեցաք,  
Թոչունի համար դուք չեք գայլ անհագ,  
Ինչպես չար գալլը խեղճ մոր գավակին:

Խ Ր Ա Տ

Տըղա՝ եղի՞ր դու ուրախ ու բարի,  
Ժամ ու օրերըդ կանցնին հանաքով,  
Ճամփադ չի լինիլ բըսած տատակով,  
Ամեն քու իղձըդ շուտ կը կատարի:

Տըղա՝ եղի՞ր դու ուրախ ու բարի,  
Քիչըդ կերևի քեզ միշտ ու միշտ շատ,  
Հընոտիդ էլ քեզ կերևի ճոխ զարդ,  
Ամեն կարիքըդ շուտ կը կատարի:

Տըղա՝ եղի՞ր դու ուրախ ու բարի,  
Դըժվար չերևիլ քեզ աշխատանքը,  
Զի տանջիլ կյանքի քեզ տառապանքը,  
Մըտիդ բաղձանքը շուտ կը կատարի:

Վ.Ա.ՆԻԶԿԱ.

Վանիչկալին շատ են գովում,  
Որ լավ աշակերտ է նա,  
Որ ֆրանսերեն վարժ է խոսում,  
Ճանաչում է Եվրոպա:

Բայց մայր լեզու հայերենի,  
Մեջը մունջ է ու տըգետ  
Զի ճանաչում հայաստանի  
Ո՛չ մի քաղաք, ոչ մի գետ...

Ո՛չ մարդ, կըկու է քու Վանլան,  
Որ սեպհական շունի բուն.  
Թութակ է քու գոված տըղան,  
Որ չը գիտե յուր լեզուն:

(Ազգային ավանդություն)

Արտուրիկ ինչու թըռչում ես վեր վեր,  
Երկընքեն ասում ես տըխուր տաղեր,  
Պարտեղ ու այգի ինչու չես գընում,  
Քընքույշ ձագերդ հրտեղ ես հանում:

Այս, շատ են, շատ են իմ կըսկիծն ու ցավ.  
Իմ մըտերիմը գընաց, հեռացավ.  
Հայ հողագործը — իմ սերտ բարեկամ,  
Թըշնամու ահեն գընաց դաղթական:

Այն օրից հայոց գաշտք ամայացան,  
Բերրի արտերը փըշով լըցվեցան...  
Տափի վրա չունիմ ես հանգստություն,  
Ու այգոր համար երկինք եմ թըռչում,  
Երկինք եմ թըռչում ցերեկ, իրիկուն,  
Երգով աղերսում եմ միշտ աստղծուն,  
Որ մեզ ողորմի իր աջով գըթած,  
Հայ հողագործին անե գերեղարձ,  
Հայաստան բերե խեղճ հայ գեղջուկին, —  
Եյս է խորհուրդը իմ տըխուր երգին:

ՊՑՈՒԳՆԵՐ

Լավ պըտուղներ են —  
Տանձ, կեռաս, սալոր,  
Մոր, ելակ, հաղարչ,  
Դեղձ, բալ ու խընձոր.

Բայց երբ տեսնում եմ  
Խաղող ու ծիրան,  
Ինչու հիշում եմ  
Ես միշտ Հայաստան:

ՕՐՈՌՈՅԻ ԵՐԳ.

Արի իմ սոխակ, թնդ պարտեզ, մերին,  
Տաղերռվ քուն բեր տըղիս աչերին.  
Բայց նա լալիս է, ոդու սոխակ մի գալ,  
Իմ որդին չուզե տերացաւ դառնալ:

Եկ, աբեղաձագ, թող արտ ու արոտ,  
Օքոզե տըղիս, քընի է կարոտ.  
Բայց նա լալիս է, դու ձագուկ մի գալ,  
Իմ որդին չուզե աբեղա դառնալ:

Թող դու, տամրակիկ, քու ձագն ու բունը,  
Վուվույով... տըղիս բեր անուշ քունը.  
Բայց նա լալիս է, տամրակիկ, մի գալ,  
Իմ որդին չուզե սըգավոր դառնալ:

Կաչաղիկ ճարպիկ, գոյ արծաթասեր,  
Շահի զըուցով երդուս քունը բեր:  
Բայց նա լալիս է, կաչաղակ մի գալ,  
Իմ որդին չուզե սովորտգար դառնալ:

Թող ոքսըդ արի, քաջանիդտ բակե,  
Դու երգը դուցե իմ որդին կուզե,  
Բազեն, որ եկավ, որդիս լոեցավ,  
Ռազմի երգերի ձախով քընեցավ:

Հ Օ Ւ Ց Ս

Թնդ փըչե քամին պինդ պինդ երեսիս,  
Վերեն ամպերեն սաստիկ ձյուն թող գա.  
Որքան որ կուզե՝ թող փըչե չյուսիս,  
Հուսով եմ՝ վաղ-ուշ գարունը պիտ գա:

Թուխպը թող պատե երկինքը պայծառ,  
Թանձը մարախուղ երկիր թնդ փակե,  
Տարերք աշխարհիս խառնըվին իրար,  
Հուսով եմ՝ վաղ-ուշ արև պիտ ծագե:

Թնդ գա փորձություն, թող գա հալածանք,  
Խավար թնդ դառնա անաղոտ լույսը,  
Սաքսափելի չեն հալին տառապանք, —  
Ծիալն... չի հատներ խղճուկի հուլսը:

## ՑԱՆԿ.

1. Կոռանկներ . . . . .	3
2. Բազիկ . . . . .	4
3. Կատու . . . . .	5
4. Գառնուկ . . . . .	6
5. Ծիծեռնակ . . . . .	7
6. Մեղու . . . . .	8
7. Գալրուն . . . . .	9
8. Գալրուն . . . . .	10
9. Արկ . . . . .	11
10. Անձրի . . . . .	12
11. Մանիշակ . . . . .	13
12. Աշուն . . . . .	14
13. Զյուն . . . . .	15
14. Զորս եղբարք . . . . .	16
15. Զմեռ . . . . .	18
16. Զյուն . . . . .	19
17. Նոր տարի . . . . .	20
18. Իսկական բաղդ . . . . .	21
19. Վարժատուն . . . . .	22
20. Դիտություն . . . . .	24
21. Ամենամեծ անբաղդություն . . . . .	25
22. Խելոք երեխա . . . . .	26
23. Աքլար . . . . .	27
24. Տիսուր երեխա . . . . .	28
25. Ժրաշան տղա . . . . .	29
26. Երկու ու մի . . . . .	30
27. Թռչունի ձագ . . . . .	31
28. Խրամ . . . . .	32
29. Վանիչկա . . . . .	33
30. Գոռողներ . . . . .	34
31. Արտուր . . . . .	35
32. Օրորոցի երդ . . . . .	36
33. Հույյս . . . . .	37

Ա Յ Ս 8

Նկամիչ  
ՀՈՎ. ԶԱԳԱՐԵ

Կազմեց և խմբագրեց՝

Հ. Բ. Մուրադյանը

Վ.Յ. 450. Գատվեր 324. Տիրաժ 4000.

Հայպետ'րատի տպ. Երևան, Անինի, 65,

ՀՀ Ազգային գրադարան



NL0405326

12070

ԳԻԱԸ 1 ԱԼԻՔ.

2

ՐԱՓԱՅԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ  
ДЕТСКИЕ СТИХОТВОРЕНИЯ  
(На армянском языке)  
Армгия, 1941, Ереван